ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 223– Ա

«ՁԱԳԻԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԵՌՆԻԿ ԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԱՐԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման հավելվածի 4-րդ կետը և նկատի ունենալով Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Գանդալյանի 2026 թվականի մայիսի 7-ի զեկուցագիրը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2026 թվականի մայիսի 11-ից լուծել «Ձագիկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լեռնիկ Ազարյանի հետ 2022 թվականի փետրվարի 8-ին կնքված N 06 աշխատանքային պայմանագիրը:

2. 2026 թվականի մայիսի 11-ից «Ձագիկավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Մարինե Նավասարդյանին:

2026-05-07 17:50:16 GMT+4
Հավաստված է էկենդի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. մայիսի 7
Ք. Կապան